ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գևորգյան Հոգևոր ճեմարանի
Գ լսարանի սան

ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պէտք է քաջալերել այս բարեպաշտական կրթիչ եւ ազնուացուցիչ սովորութիւնները մանաւանդ այս մեքենականացած եւ հաճոյապաշտ դարում, ուր մարդը կը կորսուի մարդուն մէջ»:

/Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց/

Ընդհանրական եկեղեցու աստվածապաշտության (իտալ.- devozione) կամ ծեսի (իտալ.- rito), պաշտամունքի (իտալ.- adorazione) բաղկացուցիչ հիմնական բաժիններից /ժամերգություններ, խորհուրդներ, տոներ/ են հոգևոր բարեպաշտական արարողությունները, «արարողութիւններ, որոնք կը կատարուին հաւատացեալներու կեանքին մէջ որոշ պահերու եւ որոշ դէպքերու առիթներով կամ տօներուն հետ առնչուած հանգամանքով» /Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց/:

Նշենք, որ հոգևոր բարեպաշտական արարողություններից մի քանիսը, որոնցից և պետք է ներկայացնենք, մնայուն տեղ ունեն հավատացյալների կյանքում /խաչակնքել, մոմավառություն, մատաղ ևն/: Ի բաց առյալ վերոհիշյալ մնայուն արարողությունները, Հայոց եկեղեցու «Ծիսարանում»՝ «Մաշտոցում»[1], կան նաև մի շարք այնպիսի բարեպաշտական արարողություններ, «որոնք կապուած են հաւատացեալներու կեանքին առնչուած առարկաներու եւ կարիքներու հետ» /Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց/: Սա դրանցից մի քանիսը՝ «Կանոն ջրհոր օրհնելոյ», «Կանոն, զարուտայրս, զսերմանիս, զարմտիս, զշեղջ, զկալ, զայգի և զհնձան օրհնելոյ», «Կանոն վասն դժուարածին յղի կնոջ» ևն:

Թեև մնայուն տեղ ունեցող բարեպաշտական արարողություններից շատերը /մոմավառություն, խաչակնքել, տնօրհնեք ևն/ հատուկ են նաև Ընդհանրական եկեղեցու մաս կազմող մյուս եկեղեցիներին ևս, սակայն կան նաև այնպիսի արարողություններ, որոնք զուտ Հայոց եկեղեցուն հատուկ ազգային-քրիստոնեական արարողություններն են /մատաղ, Տեառնընդառաջի խարույկ, խաղողօրհնեք ևն/: Ի վերջո, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու թե՛ խորհուրդները, թե՛ ժամերգությունները, թե՛ տոներն ու թե՛ բարեպաշտական արարողությունները, ունեն միայն Հայոց եկեղեցուն բնորոշ յուրահատուկ ազգային նկարագիր:

Սակայն, ստորև ներկայացնում ենք քրիստոնյաներիս կյանքում Հայոց եկեղեցու ընդհանուր արարողություններից, մեր կարծիքով, առավել գործածականները և տարածվածները:

---

[1] *«Մաշտոց յորում աւանդին Սրբազան արարողութիւնք ազգիս ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց», Վաղարշապատ, 1905:*

Ա. ԽԱՉԱԿՆՔՎԵԼ

«Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տեր Յիսուս...»:

/ժամագիրք/

Խաչակնքվելն (իտալ.- fare il segno della croce) Ընդհանրական եկեղեցու հնավանդ և սրբազան ծիսական արտահայտչական ձևերից է: Այդ սովորությունը գալիս է դարերի խորքից և հատուկ է բոլոր եկեղեցիներին, այդ թվում նաև՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն:

Խաչը (իտալ.- croce) թե՛ հին աշխարհում և թե՛ առավելաբար Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում անարգ մահվան, անեծքի[2], նախատինքի ու չարչարանքի գործիք էր: Այդ ժամանակաշրջանում խաչի մահվան էին դատապարտվում ամենածանր հանցագործներն ու ավազակները (միաժամանակ նշենք, որ նրանք, ովքեր հռոմեական քաղաքացիություն ունեին, թեև մեծ հանցանք էլ գործեին, բայց այնուամենայնիվ խաչի մահվան չէին դատապարտվում. նրանք գլխատվում էին: Ըստ այսմ. երբ Պետրոս և Պողոս առաքյալները քրիստոնյա լինելու և քրիստոնեություն քարոզելու համար Հռոմում ձերբակալվեցին, ըստ ավանդության Պետրոս առաքյալը խաչվեց, իսկ Պողոս առաքյալը, քանի որ Հռոմեական կայսրության քաղաքացիություն ուներ, գլխատվեց): Նշենք, որ փայտից պատրաստված այդ քառաթև գործիքը՝ խաչը, որը մարդկանց սոսկում էր պատճառում, իբրև ծայրագույն պատիժ, Հռոմեական կայսրությունում շարունակվեց գործածվել մինչև Կոստանդիանոս կայսեր ժամանակները, երբ նա 313 թվականի Միլանի էդիկտով (հռչակագրով) քրիստոնեությունը կայսրության տարածքում ազատ կրոն հռչակեց և ի հարգանս Քրիստոսի խաչի, պատիժն արգելեց:

Եվ ի լրումն ժամանակի, աշխարհ եկած Աստծո Որդին, հանուն մարդկության փրկության, Իր իսկ կամքով հանձն է առնում խաչի անարգ ու նախատելի մահը, որպեսզի «Նա, Ով հնազանդվելով եկավ, օգնության ձեռք մեկնեց ամենաստորին վիճակի մարդկանց և փրկության հույս ներշնչեց: Այդ պատճառով Քրիստոս բարեհաճեց այդպիսի մահով մահանալ, որով մահանում էին քամահրելի ու ստոր ստրուկները, որպեսզի չլինի և ոչ մեկը, որ Նրան հետևել չկարողանա» /Ս. Լակտանտիոս (Գ դարի լատին հայր)[3]/: Ուստի խաչափայտը՝ մահվան այդ գործիքը, Քրիստոսով այլակերպվելով՝ քրիստոնյաներիս համար դարձավ հավատքի, հույսի, սիրո և հաղթանակի նշան:

«Խաչի գործությունը Քրիստոսն է, որ միացած ու բևեռված է նրա վրա, նյութը փայտն է, ձևը՝ քառակողմ, իսկ մահապատժի գործիք լինելը կյանքի պատճառ եղավ մեզ համար»[4]:

Հարկ ենք համարում նշել, որ թե՛ հնում և թե՛ այսօր աղանդավորները մեղադրել ու մեղադրում են Քրիստոսի Ս. եկեղեցուն՝ խաչը պաշտելու և նրան երկրպագելու համար, ասելով՝ «չէ՞ որ Քրիստոս դրա վրա գամվեց ու

---

2 *Բ Օր. ԻԱ 23:*

3 *„Новая скрижаль или объяснение о церкви, о литургии и о всех службах и утварях церковных, Вениамина, архиепископа Нижегородского и Арзамасского", Санктпетербургъ, 1870, ст. 55.*

4 *Ա. Գր. Տաթևացի, «Քարոզ Սուրբ Խաչի մասին», Երևան, «Գանձասար» աստվ. կենտ., 1995, էջ 5:*

չարչարվեց: Ուստի մեղք է Քրիստոսի մահվան գործիքը պաշտելը: Այդպես վարվելով Հիսուսին կրկին անգամ խաչն ենք հանում»: Սակայն նրանք չարաչար սխալվում են. քանզի եթե նրանք ճշմարիտ քրիստոնյաներ լինեին, ապա երբեք ու երբեք այդպես չէին արտահայտվի, այլ կճանաչեին Քրիստոսի փրկագործությունը, և կտեսնեին, որ քրիստոնյաներիս համար Հիսուսի խաչն այլևս ոչ թե կյանքից զրկող գործիք է, այլ փրկավետ ու կենսապարգև նշան: Դեռ ավելին, «խաչը մեզ համար կոչվում է սրբություն, փրկություն, արդարություն և իմաստություն»[5]:

«Իր քառաթև ձևով խաչը փրկություն է մեզ համար, քանզի այն խորհրդանշում է Քրիստոսի չորս բարերարությունները. խաչի վերին մասը ցույց է տալիս երկնքի Արքայության բացվելը, ստորին մասը՝ դժոխքի ավերումը, աջը՝ շնորհների բաշխումը, իսկ ձախը՝ մեղքերի թողությունը: Քառաթև խաչը խորհրդանշում է նաև չորս առաքինությունները, որոնց վրա պետք է տարածենք մեր ներքին մարդուն. վերին մասը նշանակն է սիրո, ստորինը՝ խոնարհության, աջը՝ հնազանդության, իսկ ձախը՝ համբերության»[6]:

«Խաչը մեզ համար սրբություն է՝ մահվան գործիք լինելով: Խաչափայտը, որ նախկինում մահապատժի և անեծքի գործիք էր[7], Քրիստոս մեզ համար կենաց և օրհնության միջոց դարձրեց՝ մեզ գնելով Օրենքի անեծքից՝ անեծք լինելով մեզ համար[8]: Եվ մեր մեղքերը սրբելով՝ արդարացրեց մեզ քառաթև խաչի վրա Իր անմեղ Պատարագով, ինչպես Հին Ուխտի գառն էր քառակողմ սեղանի վրա [պատարագվում][9]: ...Արդ, սուրբ և անարատ մարմնով Նա միացավ խաչափայտին ու սրբեց այն՝ մեզ տալով այն որպես սրբության միջոց ընդդեմ դևերի, մեղքերի, հիվանդությունների և այլ պղծությունների, քանզի ովքեր հավատով մերձենում են Սուրբ Խաչին, նրա միջոցով սրբվում են այս ամենից»[10]:

Ահա թե ինչու ամեն անգամ թե՛ հնում և թե՛ այսօր, որպես կանոն խաչակնքվել (նշենք, որ առաքելական շրջանում, առավելաբար հալածանքների ժամանակ, հավատացյալներն իրար հետ ծանոթանում էին «կուրծքը խաչակնքելով», որը և 1-2-րդ դարերում, ինչպես վերը նշեցինք, նվիրագործվում է եկեղեցու կողմից՝ դառնալով սրբազան ծիսական արտահայտչական ձև) ու խաչակնքվում ենք՝ աղոթքի սկզբում ու վերջում, եկեղեցի մտնելիս ու ելնելիս, սրբապատկերին կամ որևէ սրբության մոտենալիս, արարողությունների ժամանակ, խնկարկության և պատարագիչ քահանայի խաչանիշ օրհնության ժամանակ և այլ պատեհ առիթներով:

Խաչակնքվելը՝ վահան է ընդդեմ դիվական ներգործությունների.«Եթե դու ջերմեռանդությամբ խաչակնքվես, ապա ոչ մի չար ոգի չի կարող քեզ մոտենալ, որովհետև նա կտեսնի այն Սուրը (այսինքն՝ Հիսուս Քրիստոսին - Ա.Կ.), որը նրան մահացու խոցեց, և այն զենքը (խաչը - Ա.Կ.), որով Քրիստոս կործանեց նրանց (այսինքն՝ սատանայի ու նրա արբանյակների - Ա.Կ.) ողջ

---

5 *Նույն տեղը, էջ 8:*
6 *Նույն տեղը, էջ 6 - 7:*
7 *Բ Օր. ԻԱ 23:*
8 *Գաղ. Գ 13:*
9 *Բ Օր. ԺԲ 27, Իէ 6:*
10 *Ս. Գր. Տաթևացի, «Քարոզ Սուրբ Խաչի մասին», էջ 7 - 8.*

զորությունն ու ջախջախեց օձի (այսինքն՝ սատանայի-Ա.Կ.) գլուխը» /Ս. Հովհան Ոսկեբերան (Գ դարի ընդհանրական եկեղեցու հայրերից)[11]/: Այլև խաչակնքվելով.

ա. հայցում ենք Տիրոջ օգնությունը, ողորմությունն ու օրհնությունը.

բ. փափագում ենք, որ այսուհետև մեզ նայելիս տեսնեն միայն Խաչյալ Հիսուսին.

գ. փափագում ենք ապրել ու գործել ոչ թե մեզ համար, այլ մեր Արարչի:

«Խաչակնքվելը նշանակում է մեր հին էության դատապարտում և նոր էության ծնունդ կամ Ադամի մահ և Քրիստոսի ծնունդ, հին մարդու վերջ և նոր մարդու սկիզբ»[12]:

Խաչակնքվելիս երեք մատները (բթամատը, ցուցամատն ու միջնամատը) միացնում ենք իրար, որը խորհրդանշում է անբաժան և միասնական Ամենասուրբ Երրորդությունը: Մյուս երկու մատները (ճկույթն ու մատնեմատը) միասին սեղմում ենք ափին, որը խորհրդանշում է Քրիստոսի մեջ երկու բնության անբաժանելի միությունը՝ Քրիստոս որպես կատարյալ Աստված և կատարյալ մարդ, և այդ երկուսը որպես մեկ (մատները սեղմված են իրար): Կարևոր ենք համարում նշել, որ վերջերս ականատես ենք եղել հավատացյալների մեջ տարածված մի նորամուտ սովորության, այն է՝ խաչակնքվելուց հետո ինքն իր ցուցամատը համբուրելը, որը մեր կարծիքով ամբողջովին տարօրինակ է և ոչ խրախուսելի, քանի որ Հայոց եկեղեցում ընդունված խաչակնքման ձևը, որը գալիս է դարերի խորքից, յուրահատուկ նկարագիր ունի, ուստի և մենք պարտավոր ենք այն անաղարտ պահել:

Խաչակնքվում են հետևյալ կերպ. ասում ենք՝ «Յանուն Հօր /աջ ձեռքի երեք մատները միասին տանում ենք դեպի ճակատ/ եւ Որդւոյ /ձեռքն իջեցնում են ներքև/ եւ Հոգւոյն /ձեռքը տանում ենք դեպի ձախ կողմը/ Սրբոյ /ձեռքը տանում ենք աջ կողմը/, Ամեն /ձեռքը բացված մատներով դնում ենք սրտի վրա/:

Խաչակնքվելիս հարկավոր է գլուխը փոքր-ինչ խոնարհել, որովհետև այդպես մենք արտահայտում ենք մեր հնազանդությունն ու հպատակությունն Աստծո կամքին, քանի որ այն ամենը, ինչ որ մենք ունենք, Տիրոջից է մեզ տրված. ամբողջ աշխարհը, և ինչ որ մենք տեսնում ենք մեր շուրջը (արև, լուսին, սարեր, բուսականություն ևն) կա՛մ Աստված է արարել և կա՛մ էլ մարդն է ստեղծել, բայց այն նյութից, որ Աստված է արարել, և այն ուժերով, որ Տերը պարգևել է արարչագործության թագ ու պսակ հանդիսացող մարդուն: Ի վերջո, հենց մարդուն էլ Աստված է արարել (ահա թե ինչու Աստծուն անվանում ենք Արարիչ):

«Երբ ձեռքը տանում ենք դեպի վեր, ուզում ենք ասել, որ մեր միտքը, էությունը գամվեց խաչի վրա և թող այսուհետև Քրիստոսի միտքը գրավի մեզ:

Երբ ձեռքը տանում ենք դեպի ներքև, ուզում ենք ասել, որ այլևս մեր մարմինը չէ, որ պիտի թելադրի մեզ. նա մեռավ խաչի վրա, այլ թող Քրիստոս թելադրի Իր կամքը մեզ:

---

11 *„Новая скрижаль ...", ст. 62 - 63.*

12 *Սայիլյան Ս., «Ոսկեփորիկ», հտ. Ա, «Գրություն» ՀԲՄ, 1992, էջ 6.*

Չախ և աջ տանելով՝ ուզում ենք ասել, որ մեր ձեռքերը դարձյալ խաչվեցին խաչի վրա, որոնք չար գործելու համար արդեն անպիտան են և պիտի միայն բարին գործեն:

Ձեռքը բացված տանելով դեպի սիրտը և ասելով «Ամեն», հաստատում ենք և համաձայնվում այդ ամենին («Ամեն»՝ եբրայերեն բառ է, որ նշանակում է «Թող այդպես լինի», «ճշմարիտ է», «ստույգ է»[13])»[14]:

Ի դեպ, հայերենում «խաչակնքվել» բառն ինքնին ճիշտ է արտահայտում իմաստը՝ խաչ ու կնքվել, խաչի կնիքը դնել մեզ վրա. այսինքն՝ կնքվել Ս. Սվետարանի ողջ ճշմարտությամբ:

Բ. ՄԱՏԱՂ

«Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան»:

/Առակ. ԺԹ 17/

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր բարեպաշտական արարողություններից մեկը մատաղն է:

Տակավին նախաքրիստոնեական շրջանում շատ ժողովուրդներ իրենց կուռքերին ու չաստվածներին գոհություն ու փառք մատուցելու նպատակով բազմապիսի զոհաբերումներ էին կատարում: Նրանց թվում էր նաև հայ ժողովուրդն իր ավանդական զոհաբերումներով: Սակայն 301 թվականին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետը, ժողովրդի մեջ արմատացած հեթանոսական զոհաբերությունների վերիմաստավորման միջոցով ողորմածություն և կարոտյալներին օգնություն ցուցաբերելու հնարավորություն տեսնելով, դրանք քրիստոնեականացրեց. «Ժողովրդին հրամայեց, որ մեռելոտի կուռքերի նվերների փոխարեն, որ նախկինում մատուցում էին, միակ Աստծուն նվիրեն նվերներ անբան կենդանիներից՝ օրհնության [այսինքն՝ օրհնված - Ս.Կ.] աղ խառնելով»[15]: Ինչպես Տաթևացին է գրում. «Լուսաւորիչն կարգեաց զօրհնութիւն աղին»[16]:

Ըստ Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանի»[17], «մատաղ» նշանակում է՝ ջահել կենդանի, որը կրոնական արարողությամբ իբրև զոհ մորթվում և եփվելուց հետո բաժանվում է աղքատներին: Իսկ Ս. Գրիգոր Տաթևացին «մատաղ» բառն ստուգաբանում է «մատուցիր աղ»[18]: Ըստ Տաթևացու մատաղը «նախ՝ ընծա(ներ) է (են) Աստծուն: Երկրորդ՝ փրկության հույս է...: Երրորդ՝ աղքատասիրություն և ողորմություն է: Չորրորդ՝ ննջեցյալների հիշատակ»[19]:

---

13 *Հ.Սմառյան, «Հայերեն արմատական բառարան», հտ. Ա, Երևան, 1971, էջ 155-156:*
14 *Մայիլյան Ս., «Ոսկեփորիկ», հտ. Ա, էջ 5-6:*
15 *Ա. Ներսես Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», Էջմիածին, 1865, էջ 352:*
16 *Ա.Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Երուսաղեմ, 1993, էջ 657:*
17 *Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944, հատ. Գ, էջ 265:*
18 *«Գիրք հարցմանց», էջ 657:*
19 *Նույն տեղը, էջ 657:*

Սկսած Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի ժամանակներից՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում ընդունված սովորություն է՝ Տերունական և նշանավոր սրբերի տոներին[20], Սբ.Սեղան հաստատելու առթիվ[21], կիրակի օրերին և այլ պատեհ առիթներով Սբ. Պատարագից հետո մատաղ անելը, որպեսզի հավատացյալները Սբ. Պատարագի ժամանակ Տիրոջ պատվական ու կենարար մարմինն ու արյունը ճաշակելուց հետո անմիջապես անսուրբ կերակուր չընդունեն, այլ նախ մատաղի օրհնված միս ուտեն և ապա այլ կերակուրներ[22]: Նշենք, որ մատաղ էր արվում նաև ննջեցյալների հիշատակին և իբրև հոգեհաց բաժանվում աղքատներին ու կարոտյալներին[23]: Ի տարբերություն անցյալի, այսօր մատաղ է արվում ուխտի, ուխտագնացությունների, որևէ փորձանքից ազատվելու կամ հաջողության հասնելու համար՝ Աստծուն գոհություն և փառք մատուցելու նպատակով («Ուխտի առիթով կատարվող մատաղօրհնութիւնները ենթակային խղճի եւ հոգու հանգստութիւն եւս պարգեւում են, իսկ եթէ երբեք ենթական դրժի իր խոստումը եւ մատաղը, կամ իր կատարած մէկ այլ ուխտը չկատարի, յաճախակի առիթներով խղճահարութիւն կունենայ»[24]):

Է դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանն իր «Տարոնի պատմություն» աշխատության մեջ վկայում է. «Իսկ երբ թագավորն ու իշխանները ետ դարձան դեպի Արծանը և իջան Ս.Գրիգորի մոտ՝ Ս. Կարապետի գտնված տեղը, մեծապես գոհություն էին հայտնում Աստծուն, Պատարագ էին մատուցում, անհամար սպիտակ անասուններ, նոխազներ ու գառներ մատաղ էին անում և աղքատներին բազում ողորմություն տալիս»[25]:

Մատաղի նյութերն են՝ կենդանին ու աղը:

Ընդունված կարգի համաձայն, մատաղի կենդանին կարող է լինել արջառ, ոչխար, աքաղաղ, աղավնի և ն: Թեև այսօր ընդունված է մատաղ անել միայն արու կենդանիների, բայց հնում ընդունված է եղել նաև էգի զոհաբերումը. «Թէ որձ է և թէ էգ, ոչ է խոտելի»[26]:

Քանի որ մատաղն Աստծուն մատուցվող ընծա է, ապա մատաղացու կենդանին պետք է արդար վաստակի արդյունք լինի (և ոչ թե, ինչպես այսօր է տարածված, մուրացիկությամբ ձեռք բերված վաստակի), ընտիր և գեր, որովհետև «ընտիրը մեր աչքին սիրելի է, ինչպես Իսահակը՝ Աբրահամի»[27], և որպեսզի մատաղն Աստծուն «հաճելի լինի, ինչպես Աբելինը և ոչ [անհաճո], ինչպես Կայենինը»[28]: Խեղանդամված ու արատավոր կենդանուն չի կարելի

---

20 *«Թուղթ ընդհանրական», էջ 352*

21 *«Կանոնագիրք Հայոց», հտ. Բ, Երևան, ԳԱ հրատ., 1971, էջ 27:*

22 *«Թուղթ ընդհանրական», էջ 357 - 358:*

23 *Նույն տեղը, էջ 363 - 364:*

24 *Արտակ արք. Մանուկյան, «Շողարձակ», հտ. Բ, Թեհրան, 1996, էջ 165:*

25 *«Տարոնի պատմություն», Երևան, 1989, էջ 58:*

26 *Պողոս Տարոնացի, «Ընդդէմ Թէոփիլոսեայ հոռոմ փիլիսոփային», Կ.Պոլիս, 1752, էջ 279:*

27 *«Գիրք հարցմանց», էջ 657:*

28 *Նույն տեղը, էջ 657:*

մատաղ անել, «որովհետև Աստծո բաժինը պետք է ընտիր լինի և ոչ թե անարգ»[29]:

Ի դեպ, մատաղացու կենդանուն եկեղեցի մտցնելն արգելվում է: Եկեղեցի միայն աղն են տանում օրհնելու համար: Իսկ ինչո՞ւ կենդանուն եկեղեցի չեն տանում: Պատասխանելով այս հարցին, Տաթևացին ասում է. «Նախ՝ որովհետև եկեղեցին դրախտի խորհուրդն ունի, որտեղ անասուն չէր մտնում: Նույնպես և եկեղեցի չպետք է մտնի: Երկրորդ՝ եթե Սինա լեռանն անասուն էր մոտենում, քարկոծվում էր: Եվ քանի որ եկեղեցին անմատույց լեռ է, ապա անասուններն ու անարժանները չպետք է մտնեն, նաև՝ գազան հերձվածողները: Երրորդ՝ հին տաճարում գառ էր պատարագվում, որն Աստծո Գառի (այսինքն՝ Հիսուս Քրիստոսի - Ա. Կ.) օրինակն էր: Եվ քանի որ եկեղեցում ճշմարիտ Գառն է պատարագվում, ապա օրինակն արգելվում է [եկեղեցի մտցնելը]: Չորրորդ՝ Քրիստոսի օրինակով, որ տաճարից խարազանով հանեց ոչխարներին ու արջառներին, մենք ևս արտաքսում ենք: Հինգերորդ՝ զգուշանում ենք, որպեսզի եկեղեցին փարախի չվերածվի: Վեցերորդ՝ եկեղեցին բանավոր հոտի փարախն է և ոչ թե անբան [հոտի]: Յոթերորդ՝ ոչխարն անամոթ է, իսկ անամոթը եկեղեցուց արտաքսելի է, ինչպես Հուդան լպիրշությամբ դուրս ելավ»[30]:

Մատաղի երկրորդ նյութը, ինչպես վերը նշեցինք, աղն է: Ըստ Ս. Ներսես Շնորհալու և Տաթևացու, նախ պետք է օրհնել մատաղի աղը, որից հետո այն պետք է տալ մատաղացու կենդանուն «ի կերակուր», այնուհետև միայն կարելի է մորթել:

Իսկ թե ինչո՞ւ աղի օրհնության կարգ սահմանեց մեր հավատո հայր Լուսավորիչ Հայրապետը, այս մասին վկայում են Շնորհալին և Տաթևացին:

«Աղը մաքրության օրինակ է, ինչպես որ Քրիստոս ասաց Իր աշակերտներին. «Դուք եք երկրի աղը»[31]՝ մաքրելու աշխարհի ապականությունը խոսքի (այսինքն՝ Ս. Ավետարանի - Ս. Կ.) քարոզությամբ»[32]:

Աղի օրհնությունը կատարվում է, որպեսզի մատաղացու կենդանին տարբերակվի «կուռքերի(ն) [մատուցվող] զոհերից և հասարակ զենումներից»[33]:

Ս. Բարսեղ Կեսարացու սահմանած կանոնի համաձայն, մատաղի միսը չի կարելի պահել տանն իբրև ուտելիք, այլ նույն օրը պետք է բաշխել աղքատներին «սրտի մտօք»[34]:

Ըստ «Մայր Մաշտոցի»[35], մատաղի աղի օրհնության ժամանակ ընթերցվում է Ղուկասի Ավետարանից հետևյալ հատվածը. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին և ո՛չ էլ քո հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, և քեզ հատուցում լինի: Այլ երբ ընդունելություն անես, կանչիր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին և

---

29 *Նույն տեղը, էջ 657:*
30 *«Գիրք հարցմանց», էջ 617:*
31 *Մատթ. Ե 13:*
32 *«Թուղթ ընդհանրական», էջ 365-366:*
33 *«Գիրք հարցմանց», էջ 657:*
34 *«Կանոնագիրք Հայոց» տես «Կանոնք Բարսղի Կեսարացւոյ», հտ. Բ, էջ 154.*
35 *«Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ.Պոլիս, 1807, էջ 88.*

երանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հարության օրը»[36]:

Ավետարանական այս հատվածի նշանակությունն այն է, որ երբ հավատացյալ մեկը մատաղ է անում, ապա նա ողջ մատաղը պետք է բաժանի առանց աչառության՝ աղքատներին ու կարոտյալներին՝ իբրև ողորմություն (նշենք, որ աղավնու պարագային նախընտրելի է բաց թողնել), որովհետև «ամեն տեսակ բարեգործություններից Աստծուն ավելի մոտ ու պատվական է աղքատասիրությունը, որով և առաջին սրբերը՝ Աբրահամը, Իսահակն ու Հակոբը, ընտիր երևացին»[37]: Որովհետև «ով ողորմում է աղքատին, արժանի է երանության»[38], որովհետև «[ինչ որ] իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, այդ ինձ համար արեցիք»[39]: Ի վերջո, ինչպես պատվիրում է Դանիել մարգարեն՝ «քո մեղքերը քավիր ողորմությամբ և քո անօրենությունները՝ աղքատներին գթալով»[40]:

Սակայն միևնույն ժամանակ պետք է զգուշանալ Տերունական պատգամից. «...Ձեր ողորմությունը մարդկանց առաջ չանեք, որպես թե այն լինի ի ցույց նրանց. այլապես վարձ չեք ընդունի ձեր Հորից, որ երկնքում է: Այլ երբ ողորմություն անես, փող մի հնչեցրու քո առջև, ինչպես անում են կեղծավորները ժողովարաններում և հրապարակներում, որպեսզի փառավորվեն մարդկանցից... Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես»[41]:

Նշենք նաև, որ Ս. Բ. Կեսարացու կանոնների համաձայն, եթե մատաղն օրհնվում ու մորթվում է վանքի (կամ եկեղեցուն կից) մատաղատանը, ապա ոչխարի ու արջառի դեպքում պետք է «զմորթն եւ զհասն (այսինքն՝ կենդանու մորթին ու մեկ ոտքը -Ա. Կ.) յեկեղեցին տացէ»[42]:

Մատաղի կենդանուն, ըստ Ս. Գ. Տաթևացու, պետք է մորթի «արու՝ աշխարհական և հաւատացեալ»[43]: Կենդանուն պետք է մորթեն երկաթե սուր դանակով, «և ոչ այլ ինչ գործի. զի թէ լիցի երկաթ և ոչ սուր, և թէ սուր և ոչ երկաթ, ոչ է պիտոյ»[44]: Կինը, մանուկն ու քահանայական դասին պատկանող որևէ մեկը, ըստ Տաթևացու, չպետք է մորթեն մատաղի կենդանուն:

Կարևոր ենք համարում նշել, որ վերջերս ականատես ենք եղել մի երևույթի, այն է՝ անասունի արյունից կերակուրի պատրաստմանը, որն ամբողջությամբ նողկալի է ու անհանդուրժելի: Ահա թե այդ մասին ինչ է պատվիրում Ս. Ներսես Շնորհալի Հայրապետը. «...եվ թող մեկը գառի արյունը տգիտաբար չհավաքի կամ ուտի, ինչպես որ լսում ենք, թե տխմարներն են անում, ...որովհետև արյունը, ըստ Աստծո հրամանի, որ

---

36 *Դուկ. ԺԴ 12-14:*
37 *Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն», Երևան, 1982, էջ 75:*
38 *Առակ. ԺԴ 21:*
39 *Մատթ. ԻԵ 40:*
40 *Դանիելի մարգ. Դ 24:*
41 *Մատթ. Զ 1-3:*
42 *«Կանոնագիրք Հայոց», հտ. Բ, էջ 135,154: Նաև՝ «Թուղթ ընդհանրական», էջ 353:*
43 *«Գիրք հարցմանց», էջ 365:*
44 *Նույն տեղը, էջ 365:*

Նոյին ասում էր, պիղծ է. «Կենսատու արյուն պարունակող միս չուտեք»[45]: Եվ թող մեկը չհանդգնի դռների սեմերը գառի արյունով օծել, ինչպես ասում են, թե տգետներից ոմանք անում են [այդ], որովհետև այդ հրեական [սովորություն] է, և ով որ այդպես է անում՝ անեծքի տակ է, քանի որ մեր դռների սեմերը՝ մեր զգայարաններն են, որ Քրիստոսի արյունով են օծվում»[46]:

ՍԱՏԱՌԻ ՊԱՏՐԱՍԱՏՄԱՆ ՁԵՎԸ: Համաձայն Ա. Գր. Տաթևացու վկայության, հնում մատաղացու կենդանուն ողջակիզել են. «Նախ՝ օրհնեալ աղ տամք կենդանւոյն: Երկրորդ, ի հուր խորովեալ ողջակիզեմք»[47]: Սակայն այսօր, ի տարբերություն հնում նվիրագործված սովորության, ոչ թե ողջակիզվում է, այլ ջրով և քահանայի կողմից օրհնված աղով խաշվում: Այնուհետև ողջ միսը բաժանվում է մանր կտորների, և հացի /ցանկալի է, որ լավաշ լինի/ մեջ դրվելով բաշխվում միայն ու միայն աղքատներին ու կարոտյալներին[48]: Կարևոր ենք համարում նշել, որ մատաղացու կենդանու փորոտիքը, գլուխը և մյուս մնացորդները պետք է թաղվեն, որպեսզի շների ու կատուների կեր չդառնան:

Վերջում հարկ ենք համարում նշել, որ օտար եկեղեցականներն ու աղանդավորները թե՛ անցյալում և թե՛ այսօր անմտաբար մեղադրել ու մեղադրում են Հայոց Եկեղեցուն մատաղի խնդրում՝ այն նույնացնելով հրեական մեղքի պատարագի հետ: Սակայն մատաղը, հակառակ նրանց չհիմնավորված պնդումների, հրեական մեղքի պատարագ չէ, քանի որ «Քրիստոս մեկ անգամ որպես պատարագ մատուցվեց շատերի մեղքերը վերացնելու համար»[49], և «նա է քավությունը մեր մեղքերի և ոչ միայն մեր մեղքերի, այլև ամբողջ աշխարհի»[50]: Ուստի Հայոց մատաղի արարողությունը ոչ թե հրեական մեղքի պատարագն է, այլ սնոտիապատիր կուռքերին՝ դևերին մատուցվող ընծաների (այսինքն՝ կենդանիների զոհաբերությունների - Ա. Կ.), հանուն ճշմարիտ Աստծո փոփոխում. «[Ս.Գր. Լուսավորիչն] այդ զոհաբերությունները (այսինքն՝ ի պատիվ կուռքերին՝ դևերին կատարվող) հանուն ճշմարիտ Աստծո փոխեց. նույն Արարչին Իր ստեղծած կենդանիները նվիրելու [համար], ինչպես որ առաջ քան օրենքը՝ նախահայրեր Աբելը, Նոյն ու Աբրահամն [էին նվիրում]: Եվ եթե քրիստոնյա ազգերից [ոչ ոք] սովորություն չունի այս (այսինքն՝ մատաղ - Ա. Կ.) անել, թող ոչ մեկը մերն անպիտան չգտնի, քանի որ նրանք իրենց նախնի առաջնորդներից ավանդությամբ չընդունեցին, ինչպես որ մենք, և նրանց առաջնորդները նրա համար այս օրենքը չդրեցին, քանի որ հարկ չեղավ»[51]:

Այսպիսով. Հայոց մատաղը զուտ ազգային-քրիստոնեական, խորապես մարդասիրական մի արարողություն է, որը, ինչպես վերը նշեցինք, հնարավորություն է տալիս հավատացյալին ցուցաբերելու ողորմածություն և օգնելու աղքատներին ու կարոտյալներին:

---

45 *Ծննդ. Թ 4:*
46 *«Թուղթ ընդհանրական», էջ 362-363:*
47 *«Գիրք հարցմանց», էջ 657:*
48 *Դուկ. ԺԴ 12-14:*
49 *Եբր. Թ 28:*
50 *Ա Հովհ. Բ 2:*
51 *«Թուղթ ընդհանրական», էջ 353- 354:*

Գ. ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ

«Դու ես իմ ճրագը, Տեր, և Դու ես լուսավորելու իմ խավարը»:

/Բ Թագ. ԻԲ 29/

Հայոց եկեղեցու և առհասարակ Արևելյան Ուղղափառ, ինչպես նաև Հռոմեական Կաթոլիկ եկեղեցիների առհավական (հնավանդ) հոգևոր բարեպաշտական արարողություններից է մոմավառությունը:

Եկեղեցում մոմ (իտալ.- candela) վառելու սովորությունը մեզ է հասել եկեղեցու կազմավորման շրջանից /Ա դար Ք.ծ.հ.,«եկեղեցի հունարեն բառ է εκκλησια, որ ստուգաբանորեն նշանակում է «հավաքույթ, ժողով»: Իմա՛ եկեղեցին համախմբությունն է բոլոր այն հավատացյալների, որոնք ընդունում ու խոստովանում են միևնույն քրիստոնյա հավատքը, ենթարկվում են միևնույն խորհուրդներին և կառավարվում են օրինավոր պաշտոնյաներով՝ հոգևոր առաջնորդների իշխանության ներքո»/: Այդ շրջանում, ինչպես գիտենք, քրիստոնեությունը պետականորեն արգելված էր, և քրիստոնյաներն ամենուր հալածվում էին: Ուստի նորադարձ քրիստոնյաները, խուսափելով հետապնդումներից ու հալածանքներից, հավաքվում ու գաղտնաբար իրենց աղոթքն առ Աստված վերառաքում էին գետնափոր վայրերում՝ կատակոմբներում ու քարանձավներում: Եվ որպեսզի այդ աղոթավայրերը լուսավորեն, սկզբում օգտագործում էին յուղով /կամ ճարպով/ կանթեղներ, իսկ հետագայում՝ մոմ: Սակայն երբ քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն, և հիմնվեցին եկեղեցիները /եկեղեցի է կոչվում նաև նյութական շենքը՝ տաճարը/, որոնցում էլ պետք է կատարվեր աստվածապաշտական կարգը, ուստի եկեղեցիները՝ նյութական կառույցները, լուսավորելու համար պահպանվեց կանթեղի ու մոմի գործածությունը: Բայց երբ ի հայտ եկավ էլեկտրականությունը, և եկեղեցին սկսեց էլեկտրականությամբ լուսավորվել, մոմը՝ որպես հնից եկող գեղեցիկ ու խորհրդավոր սովորություն և միևնույն ժամանակ եկեղեցական արարողություններին շքեղություն ու վեհություն հաղորդելու նպատակով, մինչև այսօր շարունակվում է գործածվել եկեղեցում:

Աստծո տանը[52] եկեղեցում մոմ վառելով.

ա. մենք՝ քրիստոնյա հավատացյալներս, արտահայտում ենք մեր հավատը նյութականացված ձևով.

բ. հիշում ենք Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը խաչի վրա. Հիսուսն իր արյունը թափելով խաչափայտի վրա՝ խորտակեց դժոխքը և իր Ավետարանի փրկարար ու երկնային լույսը պարգևեց համայն մարդկությանը: Ուստի, ինչպես մոմն այրվելով լուսավորում է իր շրջապատը, այնպես էլ մենք՝ քրիստոնյաներս, առաջնորդվելով մեր Տիրոջ պատգամով՝ «դուք եք աշխարհի լույսը»[53], պետք է մեր ճշմարիտ աստվածգիտության լույսով և քրիստոնեավայել կյանք ապրելով լուսավորենք մեր խավար շրջապատը. «Ջանացեք, աշխատեցե՛ք, այնպես ապրե՛ցեք ու գործեցեք, որպեսզի ամենքի աչքին լույսի պես փայլեք և լույսի պես օգտակար լինեք ամենքին: Ձեր գործերը լուսավոր և ընտիր լինեն, մարդիկ ձեր գործերից ձեր քարոզության ճշմարտության համոզումն ունենան, Ավետարանն ընդունեն,

52 *Մատթ. ԻԱ 13.*
53 *Մատթ. Ե 14:*

Ավետարանը գործադրեն և օրհնեն ու փառավորեն մեր երկնավոր Հորը, որ իրենց փրկության համար հաստատեց Ավետարանը և տնօրինեց մարդկության փրկագործությունը»[54]:

Եկեղեցում հավատացյալի կողմից մոմ գնելը և որևէ սրբապատկերի առաջ վառելը նկատվում է զոհաբերության՝ փոքրիկ մատաղի յուրատեսակ մի արտահայտություն ուղղված իր Տիրոջը՝ «Աշխարհի լույսին»[55], և եկեղեցու պայծառացմանը, որովհետև նյութապես սատար է կանգնում նրան (ահա թե ինչու չի խրախուսվում դրսից բերված մոմը եկեղեցում վառելը) և դրանով իսկ իրագործում Հակոբոս առաքյալի պատգամը՝ «մեռած է հավատն առանց գործերի»[56], քանի որ եկեղեցում մոմ վառելը հավատից բխող քայլ է: Ուստի եթե հավատացյալը եկեղեցում մոմ վառի (նշենք, որ յուրաքանչյուր հավատացյալ միայն իր գումարով պետք է մոմ գնի, որպեսզի եկեղեցու պայծառացման համար կատարվող զոհաբերությունը իր սեփական նյութական միջոցներից լինի), բայց դրա հետ մեկտեղ չաղոթի, ապա այն նույն է, ինչ որ խունկն առանց հոտի և աղն առանց համի. «Եթե աղն անհամանա, . . . այնուհետև ոչ մի բանի պիտանի չի լինի, այլ միայն դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի»[57]:

Ի դեպ, Հայոց եկեղեցում հավատացյալն ինքն է որոշում, թե որքան մոմ վառի (հարկ ենք համարում նշել, որ ոչ մի տարբերություն չկա կենտ կամ զույգ թվով մոմ վառելու մեջ: Միաժամանակ նշենք, որ Հայոց եկեղեցում, ի տարբերություն մյուս եկեղեցիների /մասնավորապես Ռուս Ուղղափառ եկեղեցու/, հին կամ նորոգ հանգուցյալներին նվիրված առանձին սրբապատկերներ չկան, որոնց առջև հավատացյալները մոմ վառեն: Հայոց եկեղեցում հավատացյալներն իրենք են որոշում, թե ո՛ր սրբապատկերի առաջ վառեն իրենց մոմը՝ հայցելով նախատիպի բարեխոսությունը):

Դ. ՄԱՍ ԵՎ ՆՇԽԱՐ

«Այս քող քեզ մաս և բաժին լինի
Սուրբ Պատարագից»:

Ընդհանրական եկեղեցու հնավանդ հոգևոր բարեպաշտական արարողություններից է Ս.Պատարագից հետո չհաղորդված հավատացյալներին մաս բաժանելը:

Ա և Բ դարերում, երբ հաղորդվողների (այսինքն՝ Քրիստոսի Սուրբ և Կենարար մարմնի ու արյան՝ հացի ու գինու կերպարանքի տակ ճաշակվողների) թիվը զգալի կերպով նվազեց, եկեղեցու սուրբ հայրերը որոշում են՝ այնպիսի մի հնարավորություն ստեղծել, որպեսզի հավատացյալներն անմասն չմնան Աստվածային Սուրբ Խորհրդից՝ Ս. Պատարագի հոգենորոգ արարողությունից:

Առավասիկ այս դարաշրջաններում էլ պետք է զետեղել մասի ծագումը, որը հունարեն կոչվում է αντιδωρον (antidoron): Anti նշանակում է

---

[54] *Մաղաքիա արք. Օրմանյան, «Համապատում», Ս. Էջմիածին, 1997, էջ 161:*
[55] *Հովհ. Ը 12:*
[56] *Հակ. Բ 26:*
[57] *Մատթ. Ե 13:*

«հակա, փոխարեն», իսկ doron՝ «նվեր, ընծա, պարգև», այսինքն՝ նվերի փոխարեն, իմա՛ Ս.Հաղորդության փոխարեն:

Եվ տակավին Բ և Գ դարերում, եկեղեցու ս. հայրերի իմաստուն վճռով, Ս. Պատարագից հետո, այն հավատացյալներին, ովքեր Ս.Խորհրդի ընթացքում չէին հաղորդվել, Ս. Պատարագից անմասն չթողնելու համար՝ սարկավագի կողմից բաշխվում էր նշխար, այն նշխարներից, որոնցից մեկը նախապես վերցվում էր սրբագործության նպատակով՝ արժանավորներին հաղորդելու համար:

Ոմանք մասի ծագումը կապում են Ագապիի, այն է՝ Սիրո ճաշի հետ: Սակայն կարծում ենք, որ այդ տեսակետը այնքան էլ հավանական չէ, քանի որ Ագապը՝ Սիրո ճաշը, իր գոյությունը պահպանել է մինչև Ը դար, իսկ մասը, ինչպես տեսանք, առաջացել է Բ - Գ դարերում (հարկ ենք համարում նշել, որ նույնիսկ այսօր թե՛ Հայոց եկեղեցիներում և թե՛ քույր եկեղեցիներում կարելի է հանդիպել առաքելական ժամանակաշրջանում սկզբնավորված Սիրո ճաշերի):

Ըստ Հ. Գաթրճյանի, որ Հայոց եկեղեցի մասը մուտք է գործել Թ – Ժ դարերում, բայց «չենք յուսար՝ թէ մասի սովորութիւնը մեզի համար Միջին դարու ժառանգութիւն մը եղած ըլլայ, վասն զի Հայ եկեղեցւոյ նկարագիրն է չափազանց աւանդապահ ըլլալ եւ մերժել ինչ որ նորութիւն է: Ընդհակառակը կ'սիրենք հաւատալ՝ թէ մեր եկեղեցիին մէջ եւս շատ առաջ գոյութիւն ունէր ան, իբրեւ պարզ օրհնուած հաց մը»[58]:

Ի տարբերություն նախնի եկեղեցում ընդունված սովորության, այսօր (խոսքը Հայոց եկեղեցում ընդունված սովորության մասին է) ավելի շատ թվով նշխարներ պատրաստելու փոխարեն, ավելի հեշտությամբ շատ բարակ, նուրբ ու մեծ, լավաշատիպ, բաղարջ (անթթխմոր) կլոր նշխարներ են պատրաստում, որոնք բուն նշխարից զանազանելու համար անվանվում է մաս (ռուս. /եկեղ./ – агнец, ագնեց):

Սուրբ Պատարագի ողջ ընթացքում մասը, սկուտեղի մեջ դրված, պահվում է Ս. Սեղանի ետևում: Այնուհետև Ս. Խորհրդի վերջավորությանը, երբ դպրաց դասը երգում է «Օրհնեալ է Աստուած, Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում»-ը՝ սարկավագը մասով լի սկուտեղը բեմից իջեցնում է ցած, որպեսզի ավագագույն եկեղեցականի կողմից օրհնվի, և Ս. Պատարագի ավարտից հետո, իբրև բարեպաշտական մասնակցություն և միևնույն ժամանակ իբրև Ս. Սեղանի վրա պատարագված «պատարագիքների» մնացորդներ, փշրանքներ՝ հոգևոր մխիթարության և Ս. Հաղորդության շնորհներին հաղորդակից լինելու համար, բաժանվի անարժաններին, այսինքն նրանց, ովքեր Ս.Պատարագին չեն հաղորդվել Տերունական Մարմնին ու Արյանը: Մասը՝ «հավատով ճաշակվողներին, ըստ այն հույսի ու սիրո որով ընդունում են, կարող է շնորհներ տալ»[59]:

Հույժ կարևոր է իմանալ, որ նրանք, ովքեր Ս. Պատարագի ընթացքում հաղորդվել են, հաղորդությունից հետո չպետք է մաս ընդունեն, քանի որ նրանք ճաշակել են Տերունի Մարմինն ու Արյունը՝ ընդունելով Ս. Հաղորդու-

---

58 *«Լոյս», 1905 /վերահրատարակություն, Անթիլիաս, 1987/, էջ 672:*

59 *«Ս. Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», Վենետիկ, 1847, էջ 506:*

թյան շնորհները, մինչ մասը, Ս. Սեղանի փշրանքները լինելով, ինչպես վերը նշեցինք, իբրև հոգևոր մխիթարություն բաժանվում է անարժաններին՝ չհաղորդվողներին:

Ս. Պատարագի ավարտից հետո նրանք, ովքեր չեն հաղորդվել, վերջին օրհնությունը ստանալուց հետո («Սուրբ Հոգու շնորհներով օրհնված գնացեք խաղաղությամբ, և Տեր Հիսուսը թող ձեզ և բոլորի հետ լինի. ամեն»), պետք է մոտենան և համապատասխան տեղից՝ աջ դաստակի երեսով՝ ափի հակառակ կողմով, մաս ստանան, քանի որ ինչպես Ս.Պատարագի ընթացքում աղոթքներով՝ հոգեպես մասնակից՝ եղան, ըստ չափի ու արժանավորության Ս.Խորհրդին, այնպես էլ վերցնելով օրհնված մասը՝ զգալապես կամ մարմնապես են մասնակցած լինում Սրբազան արարողությանը: Մասն ստանալու ժամանակ չափազանց կարևոր է, որ հավատացյալն օրհնված հացը՝ մասը քաշխող դպիրի հետևյալ արտահայտությանը՝ «Մաս եւ բաժին եղիցի քեզ ի Սրբոյ Պատարագէ» («[Այս] թող քեզ մաս և բաժին լինի Սուրբ Պատարագից»), պատասխանի այս կերպ՝ «Բաժին իմ Աստուած յաւիտեան» («Իմ բաժինը հավիտյան Աստված է»): Ի դեպ, վերոհիշյալ արտահայտությունները մասը բաշխելիս կարող են արտասանել ընդհանրապես բոլոր հավատացյալները:

Ի տարբերություն նախնի եկեղեցում ընդունված սովորության, այն է՝ անոթի, անսվաղ կերպով մասի ճաշակման, այսօր մասն ընդունում են թե՝ անոթի և թե՝ կուշտ վիճակներում՝ ջերմեռանդ խաչակնքվելով և մի որևէ աղոթք մրմնջալով:

Ինչպես հնում, այսօր էլ խրախուսելի է, որ եկեղեցում գտնվողները (թե՝ հաղորդվողները և թե՝ չհաղորդվողները), Ս. Պատարագից հետո՝ տուն գնալիս, իրենց ընտանիքի անդամներին, որոնք ինչ-ինչ պատճառներով եկեղեցի չէին գնացել, մաս տանեն:

Հարկ ենք համարում նշել, որ թե՝ եկեղեցում՝ մասը ստանալու ժամանակ, և թե՝ տանը՝ օգտագործելու և պահելու ժամանակ, հավատացյալները պետք է սաստիկ զգույշ լինեն, որպեսզի մասը գետին չընկնի և ոտքի կոխան չլինի:

Կարևոր ենք համարում նկատել, որ նրանք, ովքեր մկրտված չեն և կամ զավակ չեն Քրիստոսի Ս. Եկեղեցու, խրախուսելի չէ, որ մաս ճաշակեն, քանի որ, ինչպես վերը նշեցինք, մասը՝ Ս.Հաղորդության մնացորդներն է, իսկ չմկրտվածը կամ ոչ քրիստոնյա հավատացյալը չի կարող հաղորդակցվել Հիսուս Քրիստոսի փրկագործական Ս.Խորհրդին, որովհետև բոլոր խորհուրդների դուռը Մկրտությունն է:

<u>ՆՇԽԱՐԸ</u> (իտալ.-/եկեղ./ reliquia,cimelio,ռուս.-/եկեղ./ ռրսշքռրա)՝ Ս.Հաղորդության նյութերից (հաց ու գինի) մեկն է: Այն մաքուր այլուրից տափակ ու կլոր մի բաղարջ է, որի մեկ երեսն իր վրա կրում է խաչելության կամ մեկ այլ տնօրինական խորհրդի պատկեր: Այն եփվում է երկաթե թիթեղի վրա՝ առանց այրելու և առանց տապակելու: Ընդհանրապես նշխարի մեծությունը լինում է 6-10 սմ տրամագծով և 5-7 մմ թանձրությամբ: Իսկ ավելի մեծ նշխարներ պատրաստվում են Տաղավար տոներին՝ ուխտերի առթիվ հաղորդվողների բազմությանը բավարարելու համար:

Համաձայն առաքելական կանոնների՝ Ս.Պատարագի նշխարը՝ հացը, պետք է նույն օրը պատրաստվի, որպեսզի նույն օրը՝ տաք վիճակում

բարձրացվի Ս. Սեղան. «Եվ թող իշխանություն չլինի՝ նախորդ օրվանը հանելու համար, որովհետև Մովսեսն էլ չէր պակասեցնում ջերմ հացը Տիրոջ երեսից»[60]: Ըստ «Սիոն Հայոց կաթողիկոսի կանոնների»[61] Ս. Պատարագի նշխարը պետք է պատրաստի քահանան՝ սաղմոսերգության ու պատշաճ աղոթքների ուղեկցությամբ, և ուրիշ ոչ մեկը:

Այն նշխարները, որոնք տրվում են տնօրհնեքի, հոգեհանգստի և կամ Ս.Պատարագի ժամանակ (հիմնականում քահանայից դասին), կարող են նախապես էլ պատրաստված լինել: Նշենք, որ նշխարը պետք է պահվի ալյուրի, ցորենի ամբարի և կամ մի որևէ այլ վայելուչ տեղ, իբրև օրհնության, արգասավորության, առատության և միևնույն ժամանակ մխիթարության մնայուն նշան: Ի դեպ, հին նշխարը նորով փոխարինելուց հետո հինը պետք է ճաշակել՝ խաչակնքվելուց և պատշաճ աղոթք անելուց հետո:

Կարևոր ենք համարում տեղեկացնել, որ հնում հավատացյալները ճամփորդությունների ժամանակ, իբրև հզոր վահան, իրենց հետ մի նշխար են կրել: Այդ սովորությունը հույժ խրախուսելի էր, և շատ ցանկալի կլինի, որ այսօր ևս շարունակվեր կյանքի կոչվել, որովհետև աղամորդիներս միշտ ձգտում ենք մեզ հետ, իբրև հաջողության և պաշտպանության խորհրդանիշ, մի որևէ իր կրել: Ուստի որքան ցանկալի կլիներ, որ մենք մեզ հետ, փոխանակ մոգական ու կախարդական առարկաներ կրելու, իբրև Տիրոջ օրհնության մնայուն նշան, եկեղեցում՝ Ս.Պատարագի ժամանակ, Աստծո սպասավորների՝ քահանաների կողմից նվիրական բանաձևերով օրհնված մի նշխար կրեինք:

Ե. ՏՆՕՐՀՆԵՔ

«Խաչն ու Ավետարանը տանելով տուն՝ օրհնում ենք մեր բնակարանները»:

/Ս. Գրիգոր Տաթևացի/

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու /ինչպես նաև Արևելյան ու Արևմտյան մի քանի այլ եկեղեցիների/ բարեպաշտական արարողություններից է տնօրհնեքը (իտալ.- benedizione delle case), որը, ինչպես վկայում է Ս. Գրիգոր Տաթևացին, հիմնադրվել է Հարուցյալ Փրկչի կողմից. «...Հարությունից հետո Քրիստոս վերնատուն մտավ և օրհնեց աշակերտներին: Եվ Ծննդյան ժամանակ այրիին երևաց Բանն Աստված, որի համար նույն խաչն ու Ավետարանը (խորհրդանշում են Հիսուս Քրիստոսին - Ս. Կ.) տանելով տուն՝ օրհնում ենք մեր բնակարանները»[62]:

Ինչպես առաքելական շրջանում, երբ Հիսուսի տասներկու աշակերտները, հետևելով Տերունի օրինակին, Քրիստոսի Լույս Ծննդյան ու Հրաշափառ Հարության Բարի լուրն ավետելու և օրհնելու համար այցելում էին հավատացյալների տները, այնպես էլ նրանց հետևորդները՝ քահանաները, առաքելական նախանձախնդրությամբ, Հիսուսի մարդեղության ու հարության, այն է՝

---

60 *«Կանոնագիրք Հայոց» տես «Կանոնք առաքելականք», Կանոն ԼԱ, էջ 46:*
61 *«Կանոնք Սիոնի Հայոց կաթողիկոսի», Կանոն ԺԲ, էջ 10:*
62 *Ս.Գ.Տաթևացի, «Գիրք հարցմանց», Երուսաղեմ, 1993, էջ 684.*

Ս. Ծննդյան ու Ցատկի տոների առիթներով այցելում են հավատացյալների տները՝ Տիրոջ Ծնունդն ու Հարությունն ավետելու և պատշաճ արարողությամբ հավատացյալներին ու նրանց տներն օրհնելու:

Տնօրհնեքի ժամանակ, իբրև մարդ էակի ֆիզիկական գոյության երեք հիմնական տարրեր, քահանայի կողմից օրհնվում է տան հացը, ջուրն ու աղը: Արարողության վերջում, որպես օրհնության և միևնույն ժամանակ արգասավորության ու առատության մնայուն նշան, քահանան տան բնակիչներին մի նշխար է տալիս (որը, ի դեպ, սրբությամբ պետք է պահվի ալտարի մեջ կամ մի որևէ այլ վայելուչ տեղ):

Հարկ ենք համարում նշել, որ տնօրհնեք կատարվում է նաև, երբ խախտվում է տան խաղաղությունը, և երբ տանը զգացվում է դիվային ուժերի ներկայություն: Ցավոք սրտի, այսօր մեր քահանաներն ինչ-ինչ պատճառներով չեն կարողանում տնօրհնեքի համար տնից տուն գնալ : Հետևաբար հույժ ցանկալի և միևնույն ժամանակ խրախուսելի է, որ հավատացյալներն իրենք եկեղեցի գնան և որևէ քահանայի հրավիրեն՝ Ս. Ծննդյան, Ս. Ցատկի և այլ պատեհ առիթներով տնօրհնեք կատարելու: Քանի որ այդ արարողությունը չափազանց կարևոր, ուստի և անհրաժեշտ է քրիստոնյաներիս համար. թե՛ մեր հոգեվիճակի խաղաղության, թե՛ մեր բնակարանների Տեառնագրման և թե՛ հենց մեր սննդամթերքի օրհնության առումներով:

* * *

Ստորև մի քանի փոքրիկ աղոթքներ ենք ներկայացնում, որոնք խրախուսելի են, որ հավատացյալներն առ Աստված վերառաքեն վերը ներկայացրած հոգևոր բարեպաշտական արարողությունների ժամանակ:

Ս. ԽԱՉԱԿՆՔՎԵԼ

*«Տե՛ր Հիսուս, թող Քո Խաչը մեզ ապավեն լինի»[63]:

*«Տեր, ուղարկիր մեզ Ս. Խաչի զորությունը, որ մեզ ամեն ժամանակ պահպանի»[64]:

*«Ցրի՛ր, Տե՛ր, Քո Ս. Խաչի զորությամբ ընդդիմամարտությունը չարի դևերի, որ շրջապատել են ինձ, [և] կործանի՛ր նրանց»[65]:

*«Արարածների՛ խնամող, պահի՛ր Քո Խաչի նշանով իմ հոգին ու մարմինը մեղքերի պատրանքներից, դևերի փորձություններից, անիրավ մարդկանցից և հոգու ու մարմնի բոլոր վտանգներից. և ողորմի՛ր Քո արարածներին ու ինձ՝ բազմամեղիս»[66]:

---

63 *«ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի Հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յովհաննու Սանդակունւոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ», Նյու Յորք, 1986, էջ 357:*

64 *Նույն տեղը, էջ 594:*

65 *«ԱՂՕԹԱՍԱՏՈՅՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԱՌՆԵՑԻՈՅ», Երևան, 1998, էջ 46:*

66 *«Աղոթագիրք»՝ տե՛ս «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ», Երևան, «Գանձասար» աստվ. կենտ., 1992, էջ 97:*

Բ. ՄՈՄԱՎԱՈՐՈՒԹՅՈՒՆ

*«Լույսից ծագող Լույս, Արեգակ արդար, ծագիր մեզ (վրա) Քո արդարության ու իմաստության լույսը և մեզ լույսի ու ցերեկվա որդիներ արա, որպեսզի ... երկյուղածությամբ վարենք և առանց գայթակղության ավարտենք մեր կյանքը: Որովհետև մեր Օգնականն ու Փրկիչը Դու ես, և Քեզ վայելում են փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից. ամեն»[67]:

*«Դու՛ ես իմ ճրագը, Տե՛ր, և Դու՛ ես լուսավորելու իմ խավարը»[68]:

*«Նայի՛ր և լսի՛ր ինձ, Տե՛ր իմ Աստված, լու՛յս տուր, Տե՛ր, իմ աչքերին, որ երբեք մահվան քուն չմտնեմ»[69]:

Գ. ՄԱՍ ԵՎ ՆՇԽԱՐ

*«Գոհությունն մատուցեցեք Տիրոջը, քանզի բարի է Նա, քանզի հավերժ է ողորմությունը Նրա:...Դու իմ Աստվածն ես, պիտի գոհություն մատուցեմ քեզ, Դու իմ Աստվածն ես, պիտի մեծարեմ քեզ»[70]:

* * *

Վերջացնելով մեր այս համեստ աշխատանքը՝ ցանկանում ենք շեշտել, որ հոգևոր բարեպաշտական արարողություններն ըստ էության քրիստոնյաներիս Հավատքին, Ս. Եկեղեցուն և Աստծուն կապող ոսկե շղթաներ են: Այդ իսկ պատճառով թե՛ հավատացյալներիս և թե՛ առավել ևս հոգևոր առաջնորդների կողմից պետք է քաջալերվեն, և էլ ավելի ջանասիրությամբ կյանքի կոչվեն նամանավանդ այս մեքենայականացած, նյութապաշտ ու հաճոյապաշտ ժամանակներում, ուր իրավամբ «մարդ կը կորսուի մարդուն մէջ...»:

---

67 *«ժամագիրք...», էջ 372, 374:*
68 *Բ Թագ. ԻԲ 29:*
69 *Սաղմ. ԺԲ 4:*
70 *Սաղմ. ճժէ 1; 28:*